

Մարգարիտ Խարայեւյան

ՄԵՆՈՒԱՅԻ ՄԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վանա լճի հյուսիս-արևելյան ափին գտնվող Դյուզակ գյուղից հայտնաբերվել է ուրարտական արձանագրության երկու բեկոր: Դրանցից մեկը գյուղի եկեղեցում օգտագործվել է որպես վեմքար (der Altarstein), մյուսը՝ հին հայկական եկեղեցում որպես սանդղաթի աստիճան (der Tritt, տես ClCh, № 23, 24):

Այս երկու բեկորները մասնագետների կողմից հրատարակվել են որպես առանձին տեքստեր, տարբեր համարների տակ: Այդպես են հրատարակված գրանք նաև Դ. Մելիքիշվիլու Վերջերս լույս տեսած աշխատության մեջ¹:

Բեկորներից յուրաքանչյուրը պարունակում է վեց տող արձանագրության, հետևյալ բովանդակությամբ.

- Ա. 1] -ni- li KA'mes [.] -du-ú- [²
2 ¹Me] -nu-u-a-se ¹Íš-[pu]-u-i-[
3] URULu-ú-hi-i-ú-ni-i [.
4] -na-a-ni-e ¹U'e-ri-e-li [.
5 pa-a-ra-la-a-ni gu-u-ni ¹³ [.
6] ²Hal-di-i-ni-ni al-su-i-[si-ni
Բ. 1] [.] di e nu [.
2] ú [.] pa-a-ta-a [.
3] i [.] . . . e-si-i-ni [.
4] me-Í¹ [.] ¹U'hu-u-ra-[di
5] -ni-hi-ni-se URULu-hi-i-u-ni [.
6] -i-ni-e-hi LUGA'L DAN.NU LUGA'L al-su-ú [-i-ni

Դժրաստարար այս երկու քարերի լուսանկարների բացակայությունը կարող է որոշ մասնագետների մոտ վերապահում ստեղծել ստորև բերվող մեր ենթագրության նկատմամբ, սակայն էստամպաժի լուսանկարների

¹ Вестник древней истории, 1953, 2, № 32 և № 33 արձանագրությունները. այսուհետև՝ ВДИ.

² Թերևս, ըստ կոնտեքստի, պետք է վերականգնել [za-a]-du-u'-[ni . . . , որին, սակայն, անմիջապես չի հաջորդում երկրորդ տողի ¹Me-nu-u-a-še-ն, ինչպես ենթադրվում է Գ. Մելիքիշվիլու թարգմանությունից, ուր այդ երկու տողերի ու բառերի միջև եղած բավական մեծ ֆեռավածքը չի նշվում: Բոլորովին պարզ է, որ քարն ինչպես առաջին տողի վերջում, այնպես էլ երկրորդ տողի սկզբում չէր կարող թերի լինել միայն մեկ-երկու (ni, ¹Me-) նշանով:

³ Ըստ ClCh-ի և ВДИ-ի հնարավոր է նաև մեկ (1) թվանշանը կարդալ (ClCh № 23, ծնթ. 1. ВДИ, № 32, ծնթ. 2):

ուշագիր քննությունն ու համեմատությունը մեզ բերում է այն համոզման, որ հիշյալ երկու բեկորները պատկանում են մի ընդհանուր մեծ արձանագրության, որը ձգված է եղել ավելի լայնությամբ, քան բարձրությամբ: Ըստ երևույթին այդ և պակասող մյուս քարերը շարված են եղել պատի մեջ՝ հորիզոնական մի գծով:

Այդ երկու քարերի վրա նշանները փորագրված են, ամենայն հավանականությամբ, միևնույն վարպետի ձեռքով, քանի որ պարզ նկատելի է գրության խիստ նմանությունը, տողերի ու նշանների համաչափ փորագրումը և այլն. միաժամանակ, երկու դեպքում էլ, յուրաքանչյուր տող պարունակում է 8—10 նշան: Այս երկու քարերի տեքստի համեմատությունը ցույց է տալիս, որ երկու բեկորն էլ սկզբից և վերջից թերի են:

Հիմք ունենալով երկու տեքստերի, հատկապես 5-րդ տողերը, գտնում ենք, որ առաջին բեկորի 5-րդ տողավերջի ուղղահայաց նշանը անկասկած պետք է կարգալ որպես այրանվան որոշիչ՝ և երկրորդ բեկորի 5-րդ տողասկզբի՝ -ni-hi-ni-se-ի հետ վերականգնել՝ ¹[Me-nu-u-a-se ¹Is-pu-u-i]-ni-hi-ni-se. այսինչն՝ մեզ հասած երկու բեկորների միջև, ուրեմն, պակասում է նույն չափի մի բեկոր ևս՝ 8—10 նշան պարունակող տողերով: Նույն հիման վրա վերականգնում ենք նաև երկու բեկորների 6-րդ տողը.

. . . . al-su-i-[si-ni ¹Me-nu-a-ni ¹Is-pu-u-i]-ni-e-hi

Պետք է ենթադրել, որ յուրդակում գտնված այս երկու բեկորները տարվել են այդտեղ միևնույն վայրից և միաժամանակ:

Մեր ենթադրության համար հավելյալ կովան են հանդիսանում նաև երկու բեկորների չորրորդ տողում հանդիպող Lu^uerⁱeli (թագավորներ) և Lu^uhuradi . . . (զորք) բառերը, որոնք, հավանաբար իմաստային սերտ կապի մեջ են և գուցե միևնույն կապակցության մեջ քերականորեն նույն ֆունկցիան են կատարել:

Ինչպես արդեն ասացինք, տեքստը թերի է և՛ սկզբից, և՛ վերջից (ձախից և աջից). արձանագրության ընդհանուր բնույթից ելնելով, ավելի հավանական ենք համարում, որ սկիզբն ու վերջը նույնպես փորագրված են եղել նույն չափի, առնվազն մեկական քարերի վրա. ուրեմն ամբողջ արձանագրությունը, եթե տեքստը թերի չէ նաև վերից ու վարից, բաղկացած է եղել հինգ համաչափ, հորիզոնական գիրքով շարունակություն կազմող քարերի վրա:

Մեր համոզմունքով արձանագրության ընդհանուր պատկերը եղել է հետևյալը.

A.	B.	C.
1	-ni-li KA ['] MEŠ [. . .] du-u'-	ni
2 . . . ¹ Me	-nu-ú-a-se ¹ Is-[pu]-ú-i-	ni-hi-ni-se
3	URU Lu-ú-hi-i-u-ni-i	
4	-na-a-ni-e LU ['] e-ri-e-li	
5	pa-a-ra-la-a-ni gu-u-ni ¹	Me-nu-u'-a-se ¹ Is-pu-ú-i
6	DHal-di-i-ni-ni al-su-i-	si-ni ¹ Me-nu-a-ni ¹ Is-pu-ú

¹ Ըստ ClCh-ի և BDU-ի հնարավոր է նաև մեկ (1) թվանշանը կարդալ ClCh, № 28, ժնթ. 1, BDU, № 32, ժնթ. 2):

D.	E.
. dji e nu	
ú [.]pa-a-ta-a-	ri(?)
il] e-si-i-ni	
me- ¹ [.] ² hu-úra-	di
-ni- ³ hi-ni-se URULu-hi-i-u-ni	
-i-ni-e-hi LUGA'L DAN.NU	
LUGA'L al-su-u	-i-ni

Վերոհիշյալ երկու բեկորների հրատարակողները, ինչպես Հեման Հաուպտը, այնպես էլ Գ. Մելիքիշվիլին երկրորդ բեկորի տեքստում (D քար, նկ. 2) անձնանունները վերականգնել են, անշուշտ ելնելով կոնտեքստից. հինգերորդ տողում՝ [¹Menuaše ¹Ispu]nihi²niše, իսկ վեցերորդ տողում՝ ¹Menuani ¹Išpu]nieh²i, առանց որևէ կասկածի, որ այդ և նախորդ բեկորը (B քար, նկ. 1) կարող են կաղմել մի ամբողջության առանձին մասեր¹։

Մենու համողված ենք մեր այս ենթադրության մեջ և առաջարկում ենք Դ. Մելիքիշվիլու ժողովածուի №№ 32, 33 արձանագրությունները առնել մեկ ընդհանուր համարի տակ.

- Տեքստի մոտավոր թարգմանությունը կլինի այսպես՝
1. այս (կամ՝ խաղայան)՝ դռները կառուցեց
 2. Մենուան Իշպուինյան քաղաք^(*)3
 3. (քաղաք) Լուսիունի esini⁴
 4. -nane թագավորներ mei
գորք(եր)?
 5. paralani guni Մենուան Իշպուինյան (քաղաք) Լուսիունին
 6. խաղայան մեծությամբ Մենուան Իշպուինյան թագավոր (է) հզոր, թագավոր՝ մեծ⁵։

Ինչպես ցույց է տալիս այս ֆրագմենտար տեքստը, արձանագրությունը եղել է ռադմա-շինարարական բնույթի և, ըստ երևույթին, պարունակել է մոտավորապես նույն բովանդակությունը, ինչ ВДМ-ի №№ 30, 31, նաև № 70 արձանագրությունները։ Մենուան, հավանաբար հաղորդում է Լուսիունի քաղաքի գրավման փաստը, այնտեղ կատարած իր շինարարական աշխատանքները, և, գուցե, Լուսիունին Մենուախինիլի վերակոչելու հանգամանքը։

¹ Տե՛ս СICh, N 24, ծնթ. 3, 4, ВДМ, N 33, ծնթ. 2. 3։

² Նախորդ հրատարակողները վերականգնում են i]nili=այս (հոգնակի ձևով) իմաստով. շատ հնարավոր է, որ այդտեղ եղած լինի DHal-di]-ni-li, ինչպես հաճախ հանդիպում է այն KA'=դռներ իմաստի հետ։

³ Գ. Մելիքիշվիլին հնարավոր է համարում վերականգնել ուրարտական pata[ri]=բառաբարձր։

⁴ Շատ հնարավոր է, որ այստեղ եղած լինի m]e-e-ši-ni [piei]=հարկի տակ (ծգել) սովորական դարձվածքը։

⁵ Իթե սա տեքստի վերջին տողն է և E քարը, որ մեղ չի հասել, կաղմել է այդ տեքստի վերջին մասը, ապա մեր կարծիքով տողը հնարավոր է ավարտել՝ LUGA'L alsua-[i-ni a-lu-si URUTu-us-pa URU] վերականգնումով. ուրեմն, նորից մոտավորապես տասնչափ պարունակող տողով։



24. 1.



24. 2.